Ծրագրի անվանումը	Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի 110 մետր ճանապարհահատվածի ասֆալտապատում /ջրահեռացում, գծանշում, կահավորում/ և ամենագնացի ձեռքբերում
Մարզ	Գեղարքունիք
Համայնքը /համայնքները	Վարդենիս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	.175կմ, 75կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Վարդենիս՝ 39162 Տրետուք՝ 260
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրը սահմանամերձ է
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Բարձրլեռնային
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, գործողությունները և շահառուներ	Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրը բարձրլեռնային է, հանդիսանում է «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ ազդակիր բնակավայր: Գյուղը ունի դպրոց, մանկապարտեզ, ինչպես նաև գործում է բուժկետ և վարչական շենք: Տրետուք բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում եմ անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակիչները իրենց առօրյա կարիքները բավարարելու առաջնային ապրանքները գնելու համար հիմնականում կապը պահում են մոտակա բնակավայրի Մեծ Մասրիկի հետ: Բնակավայրի կենտրոնական ճանապարհը, որը կապում է Մեծ մասրիկ- Տրետուք- Կուտական բնակավայրերը ասֆալտապատված է, սակայն

գյուղամիջյան կարևոր նշանակության ճանապարհը, որը կապում է գյուղի մի մասը կենտրոնական ճանապարհին գտնվում է անբարեկարգ վիճակում, ամբողջովին քանբված է, դժվար երթևեկելի է հատկապես փոքր մարդատար ավտոմեքենաների համար, իսկ ձմռան ամիսներին անբարեկարգ ճանապարհներն ավելի են բարդացնում ձնահեռացման աշխատանքները և շատ հաճախ ճանապարհները դառնում են ոչ երթևեկելի: Երեխաների համար ձմռան ամիսները իսկական փորձություններ են դառնում դպրոց և մանկապարտեզ գնալը:

Խնդրին լուծում տալու համար առաջարկվում է բնակավայրի ամենաբանուկ և վատթարագույն թաղամասի ճանապարհի 110 մետր ասֆալտապատում՝ ջրահեռացմամբ, գծանշմամբ և կահավորմամբ: Ծրագրի անմիջական շահառուներն են տվյալ թաղամասի բնակիչները՝ 110, 35 տնային տնտեսություն:

Բնակավայրի կարիքների համար նախատեսվում է նաև ձեռք բերել ամենագնաց-բարձր մեքենա, որը մեծ անհրաժեշտություն է եղանակային ցանկացած պայմաններում: Ձմռան ամիսներին աներթևեկելի է դառնում բնակավայրի տարբեր թաղամասեր այցելություններն: Ձնաբքերի պատճառով բնակավայրը օրեր շարունակ կարող է կտրվել այլ բնակավայրերից, և բնակիչները չեն կարողանում իրենց անհրաժեշտ ամենօրյա կարիքները բավարարել: Վարչական ղեկավարի համար առավել դժվար է այդ օրերին իր բնակիչների կարիքների համար Վարդենիս գալը և բնակիչների խնդիրները բարձրաձայնելը:

	Խնդիր է առաջանում նաև գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու ժամանակ, քանի որ մշակելի հողատարածքներ բարձրանալը այն էլ անձրային եղանակային գրեթե անհնար է: Խնդրին լուծում տալու համար առաջարկվում ձեռք բերել ամենագնաց բարձր մեքենա, որը կծառայի ամռան ամիսներին մշակելի հողատարածքներ գնալու համար, իսկ ձմռան ամիսներին թաղամասերը միմյանց կապելու և երեխաներին դպրոց և մանկապարտեզ տանելու համար: Նախագծանախահաշվային փաստաթղթերը դեռևս առկա չեն, բայց նախնական ուսումնասիրությունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30.353.000 ՀՀ դրամ /կից ներկայացված է իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/: Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:
Ծրագրի կատարման ժամկետները	**04.01.2024-31.12.2024** Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը:

Ծրագրի հնարավոր ռիսկերը	Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել և իրականացվում են ասֆալտապատման աշխատանքներ: Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները

Հ/Հ	Միջոցառման անվանում	Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/	Պետական բյուջե /հազ.դրամ/
1	Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի 110 մետր ճանապարհահատվածի ասֆալտապատում /ջրահեռացում, գծանշում, կահավորում/	30.353 490 ՀՀ դրամ	30.353 490 ՀՀ դրամ
1.1	Շինարարական աշխատանք	11.000.000 ՀՀ դրամ	11.000.000 ՀՀ դրամ
1.2	Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում	400.000 ՀՀ դրամ	400.000 ՀՀ դրամ
1.3	Տեխնիկական հսկողություն	180.000 ՀՀ դրամ	180.000 ՀՀ դրամ
1.4	Հեղինակային հսկողություն	72.000 ՀՀ դրամ	72.000 ՀՀ դրամ
1.5	Չնախատեսված ծախս	348000 ՀՀ դրամ	348000 ՀՀ դրամ
2	Ամենագնացի ձեռքբերում	18.353.000 ՀՀ դրամ	18.353.000 ՀՀ դրամ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**